ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N-2

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

09.09. 2023թ. ք. Իջևան

Առցանց կազմակերպած նիստին մասնակցում էին գիտական խորհրդի նախագահ Ա. Մարգարյանը, քարտուղար Ա. Ալեքսանյանը, Գ. Սիրոյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը, Թ. Վարդանյանը, Պ. Ասլիբեկյանը, Գ. Ավետիսյանը, ՈՒԳԸ նախագահ Թ. Ջանվելյան, ՈՒԽ-ի նախագահ Ի. Բաղիրյանը, Հ. Սանթրոսյանը: Նիստն անցկացվել է zoom.us հարթակում:

Նիստի օրակարգը ներկայացրեց Ա. Մարգարյանը:

Օրակարգ

1. 2023-24 ուստարվա դեկանատի տարեկան պլանի քննարկման և հաստատման մասին(զեկ. Ա. Մարգարյան);
2. 2023-24 ուստարվա «Ընդհանուր տնտեսագիտության», Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնների ժամանակացույց-պլանների քննարկման և հաստատման մասին(զեկ. Գ. Հովհաննիսյան, Գ. Սիրոյան):
3. ԿԾ ղեկավարների աշխատանքային պլանի քննարկման և հաստատման մասին(զեկ. Գ. Սիրոյան, Թ. Վարդանյան):
4. 2023- 2024 ուստարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակների հավակնորդ ֆակուլտետի ուսանողների թեկնածության քննարկման մասին(զեկ. Ա.Մարգարյան):

Բաց քվեարկությամբ 10 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

Որոշում 1/1

- Հաստատել նիստի օրակարգը:

1. Լսեցին.- 2023-24 ուստարվա դեկանատի տարեկան պլանի քննարկման և հաստատման մասին(զեկ. Ա. Մարգարյան);

Ա. Մարգարյանը ներկայացրեց դեկանատի տարեկան պլանը, որի նպատակն է դեկանատի աշխատանքների արդյունավետ կատարումը(աշխատանքային պլանը կցվում է):

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.-Հաստատել 2023-24 ուստարվա դեկանատի տարեկան պլանը:

2. ***Լսեցին.- 2023-24 ուստարվա «Ընդհանուր տնտեսագիտության», Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնների ժամանակացույց-պլանների քննարկման և հաստատման մասին(զեկ. Գ. Հովհաննիսյան, Գ. Սիրոյան):***

Ամբիոնի վարիչները ներկայացրին ամբոնների 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակի աշխատանքային պլանները: Նրանք նշեցին, որ ամբիոնների աշխատանքային պլանները բխում են ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի աշխատանքային պլանից: (Աշխատանքային պլանները կցվում են):

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Հաստատել «Ընդհանուր տնտեսագիտություն» ու «Տուրիզմի կառավարման և մշակութաբանություն» ամբիոնների 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակի աշխատանքային պլանները:

3. ***Լսեցին.- 2023-24 ուստարվա առաջին կիսամյակի ԿԾՊ-երի աշխատանքային ժամանակացույց-պլանների քննարկման և հաստատման մասին (զեկ. Գ. Սիրոյան, Թ. Վարդանյան):***

Կրթական ծրագրի ղեկավարները ներկայացրին 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակի աշխատանքային պլանները: Նրանք մատնանշեցին, որ աշխատանքային պլանները բխում են ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի աշխատանքային և գիտական խորհրդի նիստերի ժամանակացույց պլաններից: (Աշխատանքային պլանները կցվում են):

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Հաստատել Տնտեսագիտության Ֆակուլտետի 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակի ԿԾՊ-երի աշխատանքային ժամանակացույց-պլանները:

4. ***Լսեցին.– 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակի մասնաճյուղային անվանական կրթաթոշակի հավակնորդ ուսանողների թեկնածության քննարկման մասին (զեկ. Ա. Մարգարյան):***

Դեկանը ներկայացրեց մասնաճյուղում գործող անվանական կրթաթոշակների հատկացման կարգն ու պայմանները: Այն տրվում է առավել աչքի ընկած, գերազանց առաջադիմություն և բարձր հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսանողին, որպես

ֆինանսական խրախուսանք: Ըստ մասնաճյուղում գործող կարգի՝ անվանական կրթաթոշակի հավակնորդին առաջադրված պահանջները բավարարում են հետևյալ ուսանողները.

«Վազգեն Սարգսյան» անվանական կրթաթոշակի ներկայացվեց երկու կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերած «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի առկա ուսուցման չորրորդ կուրսի ուսանողուհի Մալվինա Հովհաննեսի Վարդապետյանը:

«Արցախյան 44 օրյա պատերազմում անմահացած ուսանող» անվանական կրթաթոշակի ներկայցվեց, վեց կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերած «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի չորրորդ կուրսի ուսանողուհի Ռուզանա Արմենի Բաբուդյանը:

«Արտակ Ցուցուլյան» անվանական կրթաթոշակի հավակնորդ է վեց կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերած «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի առկա ուսուցման չորրորդ կուրսի ուսանողուհի Նոննա Մասիսի Հարությունյանը: թեկնածությունը:

«ԵՊՀ» անվանական կրթաթոշակի ներկայացվեց վեց կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերած «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի առկա ուսուցման չորրորդ կուրսի ուսանողուհի Աննա Սաշայի Օհանջանյանը:

«Շավարշ Մարգարյան» անվանական կրթաթոշակի հավակնորդ է վեց կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն և բարձր հասարակական ակտիվություն ցուցաբերած «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի չորրորդ կուրսի ուսանողուհի Ռուզանա Արմենի Բաբուդյանը:

«Սահակ Ձորափորեցի» անվանական կրթաթոշակի ներկայացվեց վեց կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն և բարձր հասարակական ակտիվություն ցուցաբերած «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի չորրորդ կուրսի ուսանողուհի Ագնեսա Արսենի Դալլաքյանը:

Գիտխորհրդի կազմը հավանության արժանացրեց 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակի հավակնորդ-թեկնածուների կազմը և միաձայն քվեարկությամբ երաշխավորեց ներկայացնել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի հաստատմանը:

Ղեկավարվելով ԵՊՀ ԻՄ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի 34 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Հավանության արժանացնել 2023- 2024 ուստարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակի հավակնորդների թեկնածությունները և ներկայացնել տնօրինության հաստատմանը:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ա. Մարգարյան

Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան